2126.2/73

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«15» 01 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0010-21

Ձեռնարկողը՝ ***«Արբակ և որդիներ» ՍՊԸ***

Գործունեությունը՝ ***Եղվարդ համայնքի Զովունի գյուղի Տ. Պետրոսյան 83/1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0010-21

<15> 01 2021թ.

Եղվարդ համայնքի Զովունի գյուղի Տ. Պետրոսյան 83/1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Արբակ և Որդիներ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Զովունի գյուղ

Ներածական մաս «Արբակ և Որդիներ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտով՝ նախատեսվում է Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի, Զովունի գյուղի Տ. Պետրոսյան 83/1 հասցեում կառուցել «Արտ-հաուս» բազմաբնակարան բնակելի շենք (կառուցապատող՝ «Արկադա Քոնսթրաքշն» ՍՊԸ):

Գործունեությունն իրականացվելու է Եղվարդ համայնքի ղեկավարի կողմից տրամադրված 2020թ. հուլիսի 22-ի N170 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 0.7734հա մակերեսով հողամասում, նպատակային նշանակությունը բնակավայրի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը Գ կատեգորիա է:

Նկարագրական մաս. Հողատարածքը գտնվում է բնակելի և հասարակական շենքերի հարևանությամբ, հարթ տեղանքով: Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար: Գործունեության ենթակա

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

տարածքը կառուցապատված չէ, բուսականությունը բացակայում է: Տեղ-տեղ հանդիպող հողային ծածկույթի վրա տարածված է կիսաանապատային գոտուն բնորոշ բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն:

Ինժեներաերկրաբանական եզրակացության արդյունքներով նախատեսվող գործունեության տարածքի երկրաբանական կառուցվածքին բնորոշ են խճային, բեկորային բազալտների գրունտների շերտերը: Տարածքում մինչև 70մ խորության վրա ստորերկրյա ջրեր չեն հայտնաբերվել:

Համաձայն նախնական գնահատման հայտի բազմաբնակարան բնակելի շենքի հեռավորությունը մոտակա շենք-շինությունից կազմում է 38.8մ:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողատարածքի մակերեսը՝ 0.7734հա,
- կառուցապատման մակերեսը՝ 1502.0մ², որը կազմում է հողակտորի 19.4 % -ը,
- կառուցապատման ստորգետնյա մակերեսը՝ 2986.0մ²,
- բարեկարգման մակերեսը՝ 3112մ², որից՝
  - ասֆալտապատ մակերեսը՝ 2050.0մ²,
  - մայթերի մակերես 1062.0մ²,
- խաղահրապարակի մակերեսը՝ 376.0մ²,
- բազմաբնակարան բնակելի շինության ընդհանուր գումարային մակերեսը՝ 14.735 մ²,
- կանաչապատման մակերեսը՝ 3120.0մ², որը կազմում է հողակտորի 40.3%:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի հարկայնությունը տատանվում է 8-9 հարկ, շենքի մի հատվածը 8 հարկ է, իսկ մյուսը՝ 9, ընդհանուր բնակարանների թիվը 115 է:

Բազմաբնակարան բնակելի շենքի կիսանկուղային հատվածում նախագծվում է ընդարձակ ավտոկայանատեղի, ինչը նախատեսված է թվով 62 մեքենայի կայանման համար:

Աստիճանավանդակներում նախատեսվում է թարմ օդի ներածման և ծխի հեռացման ինքնաշխատ համակարգ, ինչպես նաև աստիճանավանդակներում նախատեսված են հակահրդեհային դռներ:

Շինության երեսապատումը նախատեսվում է իրականացնել տրավերտինե, բազալտե և բետոնե սալերով:

Բազմաբնակարան բնակելի շենքի տարածքում նախատեսվում է 14×24մ հատակագծային չափսերով խաղահրապարակ, նախատեսված է ֆուտբոլի, բասկետբոլի և վոլեյբոլի համար: Խաղահրապարակի երեսպատումն իրականացվելու է ռետինե ծածկով:

Բակային տարածքում հրշեջ մեքենաների անխոչընդոտ շարժն ապահովելու համար սիզամարգերը նախատեսվում է իրականացնել գեոտեքստիլով:

Համաձայն հայտի բնակելի շենքի հեռավորությունը մոտակա շենք-շինություններից կազմում է 38.8մ:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԻՉԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Համաձայն նախնական գնահատման հայտի, որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, նախատեսվում է կազմակերպել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ, հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ: Բոլոր տիպի շին. մոնտաժային աշխատանքները կատարվելու են՝ պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները: Աղմուկ առաջացնող աշխատանքներն իրականացվելու են ~~երեկոյան~~ օրվա ցերեկային ժամերին:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի:

«Արտ Հաուս» բնակելի համալիրի գազամատակարարումն իրականացնելու համար կառուցապատողը կդիմի «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը՝ համապատասխան տեխնիկական պայման ստանալու համար:

Բնակելի համալիրի ջերմամատակարարման համար կաթսայատուն չի նախատեսվում, ջերմամատակարարումն իրականացվելու է անհատական՝ ջեռուցման կաթսաների միջոցով:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավեցման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 2188.62մ³/շին. ժամ: Ջրամատակարարումը իրականացվելու է գոյություն ունեցող ջրատարից՝ համաձայն «Վեոլի Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի, իսկ կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շահագործման փուլում «Արտ-հաուս» բնակելի համալիրի համար նախատեսվում է 24 ժամյա խմելու ջրամատակարարման համակարգ: Ըստ տեխնիկական պայմանի, խմելու ջրամատակարարման համակարգը պետք է սնվի Տ. Պետրոսյան փողոցի N 83 տարածքի հարակից տարածքով անցնող ջրամատակարարման քաղաքային ցանցից: Միացման կետի հարակից տարածքում նախաատեսվում է փականային հոր և ջրամատակարարման հոր՝ երկաթբետոնե հավաքովի էլեմենտներով: Խմելու ջրամատակարարման արտաքին ցանցը նախատեսվում է իրականացնել ստորգետնյա: Խմելու ջրամատակարարման ներքին ցանցի բաշխման համար շենքերի ստորգետնյա հարկերում նախատեսվում է խմելու ջրի պոմպակայաններ, իսկ կենցաղային կոյուղու համակարգը նախատեսվում է միացնել կենցաղային կոյուղու քաղաքային ցանցի Տ. Պետրոսյան փողոցավ անցնող 500մմ խողովակին: Համալիրի

հեղեղատար կոյուղու համակարգի համար նախատեսվում է իրականացնել գծային անձրևընդունիչներ 20սմ լայնությամբ, որոնք կտեղադրվեն համաձայն տեղի հատակագծային լուծումների, բակային հատվածի ցածր նիշերում, ինչպես նաև նախատեսվելու են կետային անձրևընդունիչներ տանիքից իջնող կանգնակների տակ: Անձրևընդունիչներից հավաքված ջրերը 250մմ տրամագծի խողովակներով կտեղափոխվեն բակային ցանցի համակարգ:

Բնակելի համալիրի համար ներքին հակահրդեհային համակարգ նախատեսված չէ: Հակահրդեհային ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել բնակելի համալիրի հարակից տարածքում գոյություն ունեցող հակահրդեհային հիդրանտից:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարական աշխատանքները տևելու են 36 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ ավտոկռունկ, բետոնատար ինքնաթափ, եռակցման սարք, շարժական կոմպրեսոր, էքսկավատոր և այլն: Շինարարական հրապարակի մակերեսը կազմելու է 500մ^2, որտեղ հատուկ ծածկի տակ պահեստավորվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը, կայանվելու են շինարարության համար նախատեսվող համապատասխան շինտեխնիկան և այլն:

Բնակելի համալիրի նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 22700մ^3 ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 6800մ^3 հետլիցք: Ավելցուկային 15900մ^3 ծավալի հողային զանգվածը կտեղափոխվի համայնքի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ կենցաղային (700-800կգ) և շինարարական աղբ (800մ^3): Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբը՝ մոտակա աղբավայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչն իրականացվելու է տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Համաձայն նախնական գնահատման հայտի տարածքում տնկվելու են 9 հատ թխկի, 9 հատ հացենի, 12 հատ գնդաձև ակացիա, 2 հատ եղևնի, սիզամարգ:

Կանաչ տարածքների ոռոգումը կատարվելու է ցնցուղային և ռոտորային ջրացրիչներով: Կանաչ տարածքների ոռոգման համար նախատեսվում է ոռոգման ցանցը միացնել ջրամատակարարման բակային ցացին:

Համաձայն գնահատման հայտի տարածքում բուսահողի հզորությունը 10սմ է, ամբողջ հողամասում բուսահողի ծավալը գնահատվել է 300մ^3, ինչի օգտագործումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջներին

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԻՉԱՅԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

համապատասխան: Հողաբուսաշերտն օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:

Նախատեսվող գործունեության ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի ու մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանմանը, դրանց արդյունավետ օգտագործմանը, թափոնների կառավարմանը, աղմուկի մակարդակի ու արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով ջրցանի կատարում՝ օրական 2-3 անգամ,
- աղմկահարույց աշխատանքների իրականացումը հնարավորինս օրվա ցերեկային ժամերին,
- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,
- հեղուկ նյութերի պահումը հատուկ տակդիրների վրա՝ շրջակա միջավայր հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- վտանգավոր արտահոսքերի դեպքում անմիջապես կլանիչ նյութերով մաքրում,
- մեքենաների և տեխնիկայի լվացումը շինհրապարակից դուրս՝ համայնքում գործող մասնագիտացված կետերում,
- տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- բոլոր մեքենաների վրա համապատասխան խլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,
- քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատումը շինհրապարակում,
- տնկված ծառերի և խոտածածկի խնամք և մոնիթորինգ,
- մթնոլորտային օդ արտանետումների (փոշի, CO, NOx և այլն) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,
- օգտագործված յուղերով ու քսայուղերով հողերը հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների կանոնների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվելու է տարեկան 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում՝ 1050 հազ. դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. համաձայն նախնական հայտի բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է բնակելի և հասարակական շենքերի հարևանությամբ, հարթ տեղանքում: Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և պաշտպանության նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը: Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները:

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքապետարանի հետ համաձայնեցված:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը և պահանջները:

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արբակ և Որդիներ» ՍՊԸ կողմից ներկայացված Եղվարդ համայնքի Զովունի գյուղի Տ. Պետրոսյան 83/1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ.մասնագետ՝ Ա. Վարդանյան